53. ԽԱՉՔԱՐ, օգտագործված է որպես տապանաքար, տակին 2 տող.

ՅԱՆՈՒՆ ԱՅ
ԵՍ ԽՈՅԱՅԴ

ՅԱՆՈՒՆ ԱՅ. ԵՍ ԽՈՅԱՅԴՈՒԿ . . . .

Ծանոթ. Շարունակությունը հավանաբար պետք է պատվանդանի վրա լիներ, որն այժմ չկա. բայց մենք չկարողացանք շուռ տալ թիկունքն ստուգելու համար։

7. ԲՈՂՈՐԱԲԵՐԴ (ԿՈՒՐԹ-ԿՈՒԼԱԳ) ԳՅՈՒՂ

54. ԹՈՒԽ-ՄԱՆՈՒԿ եկեղեցու բեմի հյուսիսային կողմում.

Յիսուսի Քրիստոսի հրամանաւ, մեք Մուկրակոյ շամանարս կանգնեցրինք Թուխ-Մանուկ եկեղեցիս, յիշատակ հոգոց մերոց . . .

Հրատ. Բաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա. 40—41, Ալիշան, 179։

55. ԽԱՉՔԱՐԻ ՎՐԱ, որն ագուցված է Թուխ-Մանուկի հյուսիսային խորանի գլխին։

Թվ. ։ՌՃԳ։

Հրատ. Բաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա, 40։ Ալիշան, 179։

56. Թուխ-Մանուկ եկեղեցու հարավային մուտքի մոտ։

Թվ. ։ՌՃՁԵ։

Հրատ. Բաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա, 40, Ալիշան, 179։

57. ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԱՏԵՂԻ կիսավեր եկեղեցու ավագանի գլխին ագուցված խաչքարի վրա։

Խաչս յիշատակ է Խառնիին, թվ. ։ՌՃՁԹ։

Հրատ. Բաջբերունի, Արարատ, 1891, թիվ Ա, 41։ Ալիշան, 179։

8. ԷՐԹԻՋ ԳՅՈՒՂԱՏԵՂ

Ստ. Օրբելյանի ցուցակի մեջ հիշատակված է Երդեչ ձևով և 10 չափ հարկով, այժմ անբնակ է։ Գտնվում է Արենի (Արփա) գյուղից հյուսիս-արևելք. ՚գետի ձախ ափին։ Գյուղատեղի մոտ կա երեք կողմերից անմատչելի մի քարաբլուր, որի վրա մնում են ամրոցի ավերակները։ Արանց ներսում կան ջրամբարի և բնակարանների մնացորդներ ու ջարդված խաչքարեր, որոնք պատկանում են XIII դարին։

Գյուղատեղի մոտ կա նաև գերեզմանատուն, ուր ընկած են երկու խաչքարեր։

58. ԽԱՉՔԱՐ, վրան միայն թվականը։

ՉԻ

։ՁԻ։ (1271)։

59. *ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, ստորին մասում 3 տող.*

ՅԱՆՈՒՆԱՅԵՍՍԵՐՈԲՍՈՒԴԱՒԹԿԱ
····ԽԱՉՍԻԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՄԵԶԵՒՄԱ
····ՐՈՅԵՒՁԱԽԱԿԱՑՈՐՔԵԿՐԷՔՅԻՇԷՑԷ

ՅԱՆՈՒՆ Ա.Յ. ԵՍ ՍԵՐԲՈՍ ՈՒ ԴԱՒԻԹ ԿԱ[Ն]ԳՆԵՑԱՔ Զ[Ա]ԽԱՉՍ Ի
ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻ. ՄԵԶ ԵՒ ՄԱ[Ւ]Ր[Ա]Ն ՄԵ[Ր]ՈՑ ԵՒ ՁԱԽԱԿԱՑ. ՈՐՔ
ԵՐԿՐ[Ի]Պ[Ա]ԳԷՔ ՅԻՇԵՑ[Է]Ք[Ս]:

Ծանոթ. *Վերջին 2 տողատեղի սկզբի մասերը ջարդված են։ Ժամանակով մոտ է նախորդին,* XIII *դար։*

Լուսանկ. 20:

60. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, նույն գերեզմանատան մեջ, վրան՝*

Ես Վէրտիչայի տէր Խէչումս կանգնեցի խաչս
ի փրկութիւն հոգոյ Աբրահամին:

Ծանոթ. *Տապանաքարն այժմ չկա. երեսին քանդակված է եղել ուտելիքների սեղան, կողքին նստած մարդ՝ աջ ձեռին դանակ, ձախում՝ խորոված շամփուր. կողքին թամքած ձի, որի սանձից բռնել է պատանին։*

Հրատ. *Բաջբերունի, Փորձ, 1877, № 4, 312։ Ալիշան, 179։*

9. Ա Ր Ե Ն Ի (ԱՐՓԱ)

Այս գյուղը Վայոց ձորի հին և նշանավոր գյուղերից է։ Այն տեղավորված է Արփա գետի ձորահովտի վերջին կետում, ուրից հետո գետը մտնում է մի նեղ կիրճի մեջ՝ մինչև Շարուրի դաշտ դուրս գալը։

Հնագույն ժամանակներից սկսած, Արփա գետի ձախ ափով անցել է մի բանուկ ճանապարհ, որն Արաքսի հովտից հասնելով մինչև Արփա գյուղը, տեղանքի թելադրանքով՝ հենց այստեղից անցել է նրա աջ ափը և միշտ այդ ափերով շարունակվելով՝ հասել է իր մի ճյուղով մինչև Սևանի ավազանը, մյուս ճյուղով՝ մինչև Զանգեզուր. Արփա գյուղն, այսպիսով, եղել է թե՛ ճանապարհի հանգուցակետ և թե՛ Շարուրի դաշտից Վայոց ձոր մտնող կիրճը փակող ռազմական կետ։ Այս պատճառներով էլ գյուղը շրջապատող բարձունքների վրա հնում շինված են եղել բերդ և ամրոց, որոնց միայն ավերակներն են մնացել։

Արփա գյուղը հնում տեղավորված է եղել այժմյան գյուղից կես կիլոմետր արևմուտք գտնվող փոքրիկ բարձրավանդակի վրա, որի ավերակները մնում են՝ արևելքում բարձրացող պարսպանման ժայռերի և արևմուտքից հոսող գետի արանքում։

Իր տեղադրության այս կարևոր հատկանիշների շնորհիվ Օրբելյան իշխանները մեծ ուշադրության են արժանացրել Արփա գյուղը և այնտեղ մի շարք կառուցումներ կատարել։ Այսպես՝ Տարսայիճ Օրբելյանը գյուղում շինում է մի «դարպաս» և այն դարձնում իր նստոցը. նույն Տարսայիճի հրամանով Նորավանքի եպիսկոպոս Սարգիսը գյուղի մոտ, Արփա գետի վրա շինում է սրբատաշ քարերով մի հոյակապ և մեծածախ կամուրջ, որի մնացորդները պահպանվել են մինչև այժմ։

XIII—XIV *դարերում Արփա գյուղը եղել է խիստ այգեշատ. Վայոց ձորի մի շարք հուշարձանների պատերի արձանագրությունների մեջ հիշատակվում է նրա անունը՝ զանազան վանքերին նվիրած այգիների առնչությամբ։*